

*Das Lemberger Evangeliar. Eine wiederentdeckte Armenische Bilderhandschrift des 12. Jahrhunderts / herausgegeben von Ghnter Prinzing und Andrea Schmidt, mit beitragen von Anton von Euw, Christian Hannick, Mesrob K.Krikorian, Annette Lang-Edwards, Ghnter Prinzing, Andrea Schmidt, Christian Weise. Wiesbaden, Dr.Ludwig Reichert Verlag, 1997, 186 S., 2 Karte und XXIX Tafeln.[Sprachen und Kulturen des christlichen Orients / herausgegeben von Johannes den Heijer, Stephen Emmel, Martin Krause, Andrea Schmidt. Bd. 2].*

Լեմբերգի Ավետարանը. ԺԲ դարի վերագտնված մի ցկարագրող հայերեն ձեռագիր, հրատարակված Գյունտեր Պրինցինգի և Անդրեա Շմիդտի կողմից<sup>1</sup>:

Հայոց ձեռագրական արվեստի գլուխգործոցներից է Սկեռայի Ավետարանը, որի մասին ներկա դարի 30-ական թթ. ամփոփ աշխատանք էր հրատարակել Հ. Ներսես Ա-կինյանը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ մատյանը կորել էր, իսկ 1993 թ. մարտին հայտնաբերվել Լեհաստանի Գնիեզնո քաղաքի արքեպիսկոպոսական արխիվում՝ բյուզանդագետ Գյունտեր Պրինցինգի կողմից: Մայնցի Գուտենբերգ թանգարանում երկարատև վերանորոգումից հետո մատյանը ստացել է այսօրվա տեսքը: 1997 թ. գարնանը այն ցուցադրվել է Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում կազմակերպված «Բյուզանդիայի փառքը» ցուցահանդեսում: Այս ձեռագրի պատմության ուսումնասիրությանն է նվիրված գրախոսվող աշխատությունը-ալբոմը: Գիրքը ընդկացած է մի շարք առանձին հետազոտություններից, որոնք միասնական շարադրանքի մեջ ամբողջական գաղափար են տալիս Սկեռայի Ավետարանի գրման, արվեստաբանական նշանակության, հայագիտության և բյուզանդագիտության մեջ ունեցած արժեքի, ճակատագրի, վերանորոգման սկզբունքների մասին:

Առաջին հայացքից արհեստական է թվում գրքի «Լեմբերգի Ավետարան» վերնագիրը, քանի որ Հ. Ներսես Ակինյանի հրապարակած ուսումնասիրության մեջ այն ընդօրինակման վայրի անունով կոչված է

«Սկեռայի Ավետարան» և այդպես է մտել գիտական շրջանառության մեջ<sup>2</sup>: Գրախոսվող գրքում Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը համառոտակի ներկայացնում է Ն. Ակինյանի հետ իր անձնական շփումները և վերապատմում Սկեռայի Ավետարանին նվիրված նրա աշխատանքի բովանդակությունը (էջ 175-6):

Ավետարանի նշանակության բացահայտմանն ու նրա պատմությանն է նվիրել իր հոդվածը Գ. Պրինցինգը (էջ 11-26): Հեղինակն անդրադառնում է այս Ավետարանի և ընդհանրապես միջնադարյան արևելաքրիստոնեական գրքի ստեղծման ավանդույթներին մի դարաշրջանում և տարածաշրջանում, ուր խաչաձևվում էին Արևմտքի և Արևելքի արվեստները, գուգահեռ է անցկացնում լատին մատենագրության սեփականությունը հանդիսացող Հենրի Առյուծի (մոտ. 1188 թ.) և Քվեդլինբուրգի Սամուհել (մոտ. IX դար) ավետարանների հետ: 1993 թ. մարտին Պոզնանի Ադամ Միցկևիչի համալսարանում տեղի ունեցած դասախոսությունից հետո, արքեպիսկոպոսական արխիվի տնօրեն Մ. Ալեքսանդրովիչը Գ. Պրինցինգի ուղարկությունն է հրավիրում մագաղաթի վրա դրված մի նկարագրող հայերեն ձեռագիր Ավետարանի վրա:

1 Գրքի մասին գրախոսությունը տես Ekkehard Kraft. Das Lemberger Evangeliar: Abenteuerliche Wege einer armenischen Bilderhandschrift. - Neue Züricher Zeitung, 21 November, 1998.

2 Տարօրինակ է, որ Ներսես Ակինյանի այդ ուսումնասիրությունը տեղ չի գտել գրքի մատենագիտական ցանկում (էջ 177). այն արտացոլված է միայն ձեռագրի նկարագրության վերջում դրված մատենագիտությունում (տես էջ 30):

Ըստ ձեռագրի գրիչ և մանրանկարիչ Գրիգորի հիշատակարանի, մատյանը գրված է Հայոց 647 թ. (1197): Հեղինակը ներկայացնում է Կիլիկյան Հայաստանում և նրա շուրջ եղած քաղաքական իրավիճակը<sup>3</sup> Լևոն I Ռուբինյանի իշխանության տարիներին, անդրադառնում Լևոնի թագադրման<sup>4</sup> գործում արևելքում Կելեստին 3-րդ պապի և Շոտուֆյան Հարսուլության գերմանական կայսր Հենրիխ VI-ի նվիրակ՝ Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադ Վիտենբախի գերին: Անդրադառնալով բյուզանդացիների կողմից Կիլիկիայի տիրակալին թագ ուղարկելու պատմությանը<sup>5</sup>, Գ. Պրինցինգը հավանական է համարում Լևոն I-ին հռոմեական կայսեր ուղարկած թագով թագադրումը թվագրել 1199 թ. հունվարի 6-ով(տե՛ս էջ 20, ծան. 23): Սկեռայի Ավետարանը լիովին համապատասխանում է Հեղինակի կատարած ենթադրությանը, ըստ որի այն կարող էր լինել Լևոն I-ի թագադրության Ավետարանը, քանի որ ձեռագրի 1219/20 թ. գրված հետագայի հիշատակագրությունում խնդրվում է օրհնությանը հիշել մահացած Լևոն արքային («Ի թուականիս Հայոց ի : Ոյլ: Հանգեալ ի Քրիստոս բարեպաշտ և Աստուածասէր թագաւորն Հայոց Լեոն ի մայիս ամսոյ ի մեկն և պատկեր աւուրն չորեքշաբթի որոյ յիշատակ նորա արհնութեամբ եղիցի: Ամէն: Վասն որոյ աղաչեմք զքեզ մարդասէր Հայցմամբ արժանապատիւ ընթերցողաց կենդանի բան ի քո աէր թողցես զ[յ]անցանս սորա»): Սակայն պետք էր հաշվի առնել նաև, որ այս մատյանը գրվել է Ռուբինյանների գլխավոր հակառակորդ, Օչինյան իշխանական տան հոգևոր-մշակութային կենտրոն Սկեռայում:

1592 թ. Սկեռայի Ավետարանը վերանորոգում է լեհահայ մեծահարուստ Թորոս Պեռնաթենցը, իսկ մոտ 1830 թ. ձեռագիրը

պահպանվում է Լեմբերգ-Լվովի հայկական համայնքում: Գ. Պրինցինգը ենթադրում է, որ մատյանի ՊՀԱ թ.(1422/3) հիշատակարանը (տախտակ Գ, նկ.11) գրված պետք է լինի Ղրիմում, իսկ ըստ ՌԽԱ թ.(1591/2) հիշատակարանի (տախտակ Գ, նկ.12-13) ձեռագիրն արդեն Հայտնվել էր Ռեչ Պոսպոլիտայի թագավորության սահմաններում:

Ք. Հաննիկը և Գ. Պրինցինգը մի ամբողջ գլուխ (էջ 27-30) են նվիրել Սկեռայի Ավետարանի նկարագրությանը: Ըստ Հեղինակների, այս ձեռագրի մանրանկարների հետևողությամբ է գրիչ Ղազարն ընդօրինակել 1630 թ. Բեռլինի պետական գրադարանի հմր. 2 Հայերեն ձեռագիրը: Այնուհետև Ք.Հաննիկն անդրադաձել է Հայերեն ավետարանների մատենագրական արժեքին, թարգմանության և հրատարակության պատմությանը, համեմատելով այլ մատենագրություններում պահպանված մյուս նույնանուն բնագրերի հետ: Հեղինակն արծարծում է ավետարանների տնատման և մյուս ծիսական գրքերում (Ճաշոց, Մաշտոց) ընթերցվածների նշման և ընտրության սկզբունքները, փորձում է գնահատել Սկեռայի Ավետարանի տեղը մյուս հայալեզու ձեռագիր ավետարանների համակարգում<sup>6</sup>:

Սկեռայի Ավետարանի հիշատակարանները գերմաներեն է թարգմանել Ա.Շմիդտը (էջ 93-105): Մայնցում Ավետարանի վերանորոգման ողջ գործընթացը նկարագրում է Աննետ Լանգ-Հիլարդսը (էջ 111-119):

Անդրեա Շմիդտի հեղինակած մյուս հոդվածը կրում է «Սկեռայի վանքը (XII-XIII դդ.) Կիլիկիայի եկեղեցական և մշակութային կյանքի խաչմերուկում» խորագիրը: Հեղինակը սկզբում թարգմանաբար բերում է ներսես Լամբրոնացու «Սաղմոսաց մեկնութիւն» մատյանի հիշատակարանը, ուր պատմվում է 1189/90 թ. սելջուկների կողմից մերձփրատյան շրջանում ներսես Լամբրոնացու և նրան ուղեկցող կրոնավորների կողոպտման և մի քանիսի սպանության պատմությունը: Հեղինակի նպատակն

3 Այս շրջանում Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաքը դեռևս Սիսը(էջ 18) չէր, այլ՝ Տարսուսը:

4 Հեղինակն անդրադառնում է Լևոնի թագադրության թվականի շուրջ ծավալված վեճին (էջ 19, ծան. 22):

5 S b ' u F. D o l g e r. Regesten der Kaiserurkunden des ostromischen Reiches, 2.Teil. Zweite erweit. und verb. Aufl., bearb.v.P.Wirth, Munchen 1995, N.1642.

6 Հեղինակն այստեղ կարող էր դիմել Հակոբ Անասյանի՝ Աստվածաշնչին նվիրված ուսումնասիրությանը (տե՛ս Հ.Անասյան. Հայկական մատենագիտություն, Հ. Բ, Երևան 1975):

է ցույց տալ հայ գրիչները կրած գրկանքները տվյալ դարաշրջանում:

Ա. Շմիդտն անդրադառնում է Սկևռայի վանքի պատմությանն ու նրա նոտարատան գործունեությանը, մատնանշում, որ այն գտնվում էր Օշինյան իշխանների տիրությունում: Վերջիններս բյուզանդական կայսրության ստորականներ էին ու կրում էին սեբաստոս պատվանունը<sup>7</sup>: Վանքի ծաղկման ժամանակաշրջանը հեղինակն իրավամբ համարում է Օշինյան տան ներկայացուցիչ, Տարսուսի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացու գործունեության տարիները: Անդրադառնալով վերջինիս մատենագրական ժառանգությանը, հեղինակը թուուցիկ հայացք է նետում Կիլիկիայում ձևավորված մշակութային միջավայրի վրա, ուր կողք-կողքի խաչաձևվում էին մի շարք քրիստոնեական մշակույթներ:

Արժեք ափսի մանրամասն անդրադառնալ Սկևռայի ու Մլիճի դպրոցների մատենագրական ժառանգությանը, ճշտել յուրաքանչյուր վանքում ընդօրինակված ձեռագրերի բովանդակությունն ու տվյալ դպրոցի ուղղվածությունը, որով լուրջ քայլ կկատարվեր հիշյալ դպրոցների ավանդի ուսումնասիրության բնագավառում<sup>8</sup>:

Հետաքրքիր է հեղինակի անդրադարձը Սկևռայի գրատան XIII–XIV դդ. գործունեությանը, հատկապես Ներսես Լամբրոնացու հաջորդ Վարդան և Գրիգոր վանահայրերի օրոք: Հատկանշական է, որ վերջինս 1221 թ. Ներսես Լամբրոնացու հետևողությամբ հավանում էր Ամենայն Հայոց կաթողիկոսական դահին: Ա. Շմիդտն իրա-

վամբ առանձնացնում է Սկևռայի գրատան գործունեության երկու զարթոնքային շրջան. առաջինը թվագրում է XII դարի վերջին քառորդով և հաջորդ դարի սկզբով, իսկ երկրորդը՝ XIII դարի գրեթե նույն ժամանակահատվածով (էջ 137): Առաջին փուլում առանձնանում է Ներսես Լամբրոնացին (1178–1198), իսկ երկրորդում՝ վանքի Մխիթար, Սիմեոն, Մինաս և Կոստանդին վանահայրերը (էջ 137): Հեղինակը Սկևռայում ընդօրինակված առաջին ձեռագիրը է համարում 1173 թ. թվագրվող Գրիգոր Նարեկացու «Մատենան Ողբերգութեանը» (ՄՄ–1568)<sup>9</sup>, իսկ վերջին՝ 1279 թ. Սիմեոն վանահոր մեկենասությամբ Կոստանդին գրչի ընդօրինակված՝ Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւնը» (ՄՄ–416):

յի թագավորների և Հռոմկլայի կաթողիկոսների «Ամենայն Հայոց» տիտղոսին, XII դարի կաթողիկոսների Արշակունյաց ծաղկման մասին ավանդությանը, որոնցից յուրաքանչյուրի ուսումնասիրությունն ունի առանձին դիտական արժեք և վերջին տարիներին են միայն ուսումնասիրության նյութ դարձել (տե՛ս օրինակ. Ա. Ա. Բ ո զ ո յ ա ն. Հայ եկեղեցին Տիեզերական նվիրապետության աստիճանակարգում (Հռոմկլայի ժողովը եւ Անտիոքի պատրիարքական աթոռի հարցը XII դարի Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններում)։ «Գանձասար», 2, 1996, էջ 132–147: Ա. Ա. Բ ո զ ո յ ա ն. «Կաթողիկոս Հայոց» տիտղոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո, – «Էջմիածին», 1997, Ժ, էջ 72–81): Չգիտես ինչու, հեղինակը պետք եղած տեղերում չի հիշատակում իր սկզբնաղբյուրը: Խոսելով Հռոմկլայի եկեղեցական ժողովի մասին Ա. Շմիդտն այն թվագրում է 1179 թ., թեև սպառիչ փաստարկներով ցույց է տրված, որ այդ ժողովը պետք է տեղի ունեցած լիներ 1178 թ. (տե՛ս Ա. Բ ո զ ո յ ա ն. Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165–1178). Երևան, 1995, էջ 183–185):

9 Ձեռագրի գրիչն է Գրիգորը, ստացողը՝ Ներսես Լամբրոնացին, սակայն Սկևռայի վանքը հիշատակարաններում չի արձանագրվում:

7 Այդ մասին տե՛ս Ա. Բ ո զ ո յ ա ն. Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկիայի Հայաստանը. Երևան, 1988, էջ 226–227:

8 Այնուհետև հեղինակը թուուցիկ անդրադառնում է Կիլիկիայի Հայկական պետության և մշակույթի ինքնությունը խնդիրներին: Պարզ երևում է, որ Ա. Շմիդտն, անդրադառնալով այդքան խճողված և դեռևս լիակատար ուսումնասիրության չենթարկված հարցերին, բավարարվում է միայն Հայտարարություններով, որոնք վերաբերում են Հայ-բյուզանդա-ասորա-լատինական եկեղեցական բանակցություններին, Կիլիկիա-

Սկևռայի դպրոցի երկրորդ զարթոնքի շրջանը համընկնում է դրիչ Ստեփանոս Գոյնե-րիցանցի (մոտ 1272–1316 թթ.) և Գեորգ Սկևռացու (1246–1301 թթ.)<sup>10</sup> մշակութային գործունեության հետ: Նրանց ջանքերով է ստեղծվել դրեթոյան արվեստին նվիրված մեր միջնադարյան լավագույն ձեռնարկներից մեկը, ընդօրինակվել Հեթում II-ի Աստվածաշունչը, Կեռանի Ավետարանը (1283 թ.): XIII դարի վերջին տասնամյակով է թվագրվում նաև Հռոմկլայում պատրաստված Սկևռայի նշանավոր մասնատուփը, որն այժմ պահվում է Էրմիտաժում<sup>11</sup>: Հեղինակի ուշագրությունից վրիպել է Մխիթար Սկևռացու դործունեությունը, որը 1263 թ. որպես Կոստանդին կաթողիկոսի դեսպանագնաց մասնակցել է Աքքայում տեղի ունեցած Հայ–Հռոմեական բանակցություններին<sup>12</sup>: XIV դարի սկզբին մամուլիկներն ավերում են Սկևռայի վանքը, Ստեփանոս Գոյնեբրիցանցը ստիպված էր հայկական մատյանների ընդօրինակության գործը շարունակել Կիպրոսում: Սկևռայում դրված վերջին ձեռագիրը թվագրվում է 1349 թ.:

Հաջորդ հոգվածը Քրիստիան Վալզեն նվիրել է Լեմբերգի հայկական համայնքի պատմությանը (էջ 143–169): Հեղինակը մատնանշում է այն ճանապարհները (Անի–Ղրիմ, Կիլիկիա–Ղրիմ–Ուկրաինա–Լեհաստան) ու պատմաշրջանը (XIV–XV դդ.), երբ Հայերը սկսել են հաստատվել Արևելյան Եվրոպայում և Հնդկաստանում: Հիմնավորվել Լեմբերգ–Լվովում, որը XVI–XVII դդ. Հայոց եկեղեցու արքեպիսկոպոսական նստավայր էր և գրչության կենտրոն: XVII դարի առաջին կեսին Լեմբերգի (Թորոսովիչ) նախնաձախների գործունեությամբ սկսվում է Ռեչ Պոսպոլիտայի հայկական բնակչության կաթոլիկացումը, ապա և ձուլումը: Եկեղեցական այդ գործիչին Ուրբանոս Զ-րդը արքեպիսկոպոս է օծում և թույլ տալիս եպիսկոպոսական աթոռներ հիմնել Կամենեցում և Մոդլիվում: Այս թեմերում նոր զարթոնք է ապրում Հայաստան-ղփաղերեն գրականությունը: Այս թեմի վերջին արքեպիսկոպոսն էր Ժոզեֆ Թեոֆիլ Թեոդորովիչը, որը 1919–1923 թթ. ընտրվել է Լեհաստանի պառլամենտի դեսպուտատ: Ուկրաինայում 1984 թ. վերաբացվում է Հայոց եկեղեցու եպիսկոպոսական աթոռ, որը գլխավորում է Նաթան Հովնանյանը: 1990 թ. Լեհաստանում հաշվվում է շուրջ 6.000 Հայ, իսկ Ուկրաինայում, ըստ 1989 թ. մարդահամարի, 54.000, որոնցից 1.500-ը բնակվում է Լեմբերգ–Լվովում: Հեղինակն անդրադառնում է նաև Լեմբերգի հայկական շինություններին և գրադարանի ճակատագրին: Աշխատության վերջում հեղինակները կցել են կիլիկյան Հայաստանի և Արևելյան Եվրոպայի սխեմատիկ քարտեզները:

\* \* \*

Սկևռայի Ավետարանը կիլիկյան մանրանկարչության փառավոր էջերից է: Ավետարանի մանրանկարչական արվեստի քննությանն է նվիրված Անտոն Ֆոն Էվի ընդարձակ հոդվածը («Լեմբերգի Ավետարանը որպես արվեստի գործ»)՝ իր մի շարք ենթագլուխներով: Կարևոր տեղեկություններ համարում Ավետարանի համար մագաղաթի ձևը բերումը Կիպրոսում: Խաչակիրների տարածքներից ներմուծված մագաղաթի մասին կան նաև այլ վկայություններ<sup>13</sup>, ինչպես նաև լատինական տիպի «թավչյա» մագաղաթի բազմաթիվ օրինակներ:

Սկևռայի Ավետարանը միջին չափի է: Պրակները կազմված են 3 և 4 կրկնաթերթերից: Ձեռագրի բոլորագիրը վայելուչ երկաթաթիվը բաց շականակագույնից հասնում է

10 Վերջինիս գործունեության մասին տե՛ս V. M i s t r i h. Trois Biographies de Georges de Skevra (Studia Orientalia Christiana. Aegyptica 14), Kairo 1970; D. B u n d y. The Anonymous Life of Georg Skewrac'i in Erevan 8356. A Study in Medieval Armenian Historiography and History.– REArm 18 (1984) 491–502.

11 А. Я. К а к о в к и н. О “реликварии времени Гетума”.–Историко-фолологический журнал, 1974, N 3, с. 263–266.

12 Նրա մասին տե՛ս Ա. Բ ո ղ ո յ ա ն. Մխիթար վարդապետ Տաշրացին (Սկևռացին) Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցի պաշտպան.– «Գանձասար», Ե(1994), էջ 137–157, Զ(1996), էջ 403–420:

13 S. D e r N e r s e s s i a n. Armenian Manuscripts in the Freer Gallery of Art. Washington 1963, p. 56, 110.

մինչև մուգի և սևի: Սկզբնական մեկանը եղել է սև: Եվսեբիական հատվածները սկսվում են ոսկե գլխատառերով (Ֆոն Էվը գրանք համարում է «իմաստային հատվածներ», էջ 42), որոնց համարները նշված են գրսի կողմի լայն լուսանցքներում՝ փոքր երկաթագրով: Տեքստային ստորին լուսանցքներում եվսեբիական ցանկերն են<sup>14</sup>: Լուսանցագրագրերով օժտված է «գլխավոր ավետարանների» սկիզբը: Հետագոտողի մոտ շոշափված է էջերի ձևավորման գլխավոր զարկերակը — Հանդիպակաց էջերի ներգաշնակումը երկսյուն բնագրի լայն, գեղեցիկ գրերի, լուսանցագրագրերի (ֆիգուրատիվ կամ անոթներ ու բուսազարդեր ներկայացնող), ոսկե առաջին տողերի, գլխատառերի ու եվսեբիական գլխահամարների շնորհիվ (էջ 43):

«Տեխնիկան և գունները» ենթագլխում խոսվում է Հանդիպակաց էջերի տողատման մասին, ենթադրելով, թե այն կամ Կիպրոսում է արվել, կամ ծաղկող Գրիգորի ու նրա օգնականի ձեռքով (էջ 43): Խոսվում է ձեռագրի զարդարվածությունը երեք հիմնական գույներով մասին (կապույտ, կանաչ, կարմիր), բայց չի բացահայտված նրանց սիմվոլիկ և կոնտրաստային նշանակությունը:

«Եվսեբիոսի թուղթը և կանոնի տախտակները (խորանները)» ենթագլխում Ֆոն Էվը ներկայացնում է թղթի բովանդակությունը, ընդունում է Կ. Նորդենֆալկի գրությունը, որ 989 թ. էլմիածնի Ավետարանը ներկայացնում է եվսեբիական նախատիպը: Բյուզանդական արվեստի խոշոր դիտակ Կ. Վեսսելը (ի դեպ, սույն գիրքը նվիրված է նրա հիշատակին) խորանների շարքը գիտում էր իբրև բազիլիկայի պատկեր<sup>15</sup>, որ ճիշտ է ինտուիտիվ իմաստով (իբրև դեպի ավագ խորանը տանող կամարաշարք), բայց խորհրդանշորեն բացահայտված է «խորան-

ների մեկնություններում» (յուրաքանչյուր խորան ունի իր որոշակի խորհուրդը)<sup>16</sup>:

Երկու ենթագլուխ նվիրված է ավետարանիչների պատկերներին: Հատուկ ուշադրություն է հատկացվում նրանց շրջանակների զարդարվածության, քանի որ XI–XII դդ. բյուզանդական ավետարանիչների պատկերներն այդպիսի ճոխ նախազարդ շրջանակներ չունեն<sup>17</sup>: Շրջանակը կիլիկյան մանրանկարչության մեջ, պահելով սառը դույնի մեջ սառը և տաք դույնի մեջ տաք գունակոնտրաստի բավական գրաֆիկական մաներա, երեք էջը ընդգծում հարթության դեմ և տեղ-տեղ գունակոնտրաստային առումով կրկնվում էր պատկերի ներսում:

Ֆոն Էվը Սկևռայի Ավետարանի ավետարանիչների պատկերների համար հինգ հատկանիշ է նշում. ա) Հայացքները դեպի աջ են ուղղվել, միմյանցից անհատապես տարբերվելով, բ) նրանց աթոռները քմահաճ են կամ ունեն քնարածե թիկնակ, գ) պատկերված է մի փոքր պահարան մատյանը պահող ձկնաձև գրակալի (պուլտի) տակ, դ) նկարի ձախ մասում ճարտարապետական շրջակայքը սահմանափակվում է տան ճակատով, որն ունի բարձր ուղղանկյունաձև դուռ, ե) օղբից կախված է վարագույր (վեղում), բացի Մարկոսի պատկերից (էջ 57):

Այս նկարագրությունը թերի է. ա) աթոռները քմահաճ չեն, այլ կորացրած կողերով, որոնք այսօր էլ Հանդիպում են, իսկ թիկնակը Հյուսիսում է ռոմբաձև (ոչ թե քնարածե) կամ ծածկված շորով, բ) մատյանը

14 Հայկական ավետարաններում բնագրի ստորին լուսանցքներում միշտ տրված են եվսեբիական համեմատական ցանկերը, որ խիստ հազվադեպ են բյուզանդական և ասորական գրքարվեստում:

15 K. W e s s e l. Kanontafeln.—RBK, 3, 1972, S.967.

16 «խորանների մեկնություններ». Ալխատասիրեց Վ. Ղազարյան, Երևան 1995, էջ 20-29:

17 Եվրոպական միջնադարում, ինչպես նշված է Օտտո Պեխտի գրքում, միշտ պայքար է գնացել «Հարթության և տարածության» միջև, այսինքն իռլանդական ավանդույթի «Հարթասիրության» և կարոլինգյան արվեստի՝ անտիկ տարածականության նկատմամբ հակման միջև: Հետևաբար, թեև եվրոպական միջնադարում հարուստ էր շրջանակը, բայց այն հաճախ անորոշ էր տարածության արտահայտման իր ձգտմամբ ու ճարտարապետական միջամտության շնորհիվ: Տե՛ս Օ. Փախտ. Buchmalerei des Mittelalters. Munchen 1984, S. 173 u.f.

կամ բացված գալարը պահող գրականի տակի պահարանը Մատթեոսի նկարում պատկերված է երկու գուռը բաց, Մարկոսի մոտ փակ փեղկերով, երկրաչափորեն զարդարված, Ղուկասի մոտ բաց է մի դուռը, իսկ Հովհաննու և Պրոխորի նկարում այն չկա: Ձի խոսվում մուլթաքանների մասին, որոնց վրա նստած են Մարկոսը և Ղուկասը, և Համաբարբառ ավետարանիչների ոտքերի տակի գորգիկների մասին:

Գրքի սույն հրապարակումը հնարավոր է դարձնում Ս.Տեր-Ներսեսյանի<sup>18</sup> և մեր նյութերի<sup>19</sup> հետ ամբողջացնելու ավետարանիչների պատկերազրույթյան լիարժեք ուսումնասիրությունը կիրիկյան մանրանկարչություն մեջ:

«Անվանաթերթեր» ենթագլխում նշվում է Սկեռայի Ավետարանի անվանաթերթերի կապը Սեբաստիայի Ավետարանի անվանաթերթերի հետ (դրա մասին ժամանակին գրել է Ս.Տեր-Ներսեսյանը): Ավետարանների սկզբնատառերի կապը ավետարանիչների խորհրդանիշների հետ արևմտյան ավանդույթ է համարվում (սկսած սուրբ Հիերոնիմոսից): Մեզանում այդ կապը Հայտնի է XI դարից, ինչպես նաև այդ խորհուրդների մասին հանդավոր բանաստեղծություններից, որոնց ծագումը դեռևս Հայտնի է: Անշուշտ դժվար է պահանջել մեր հեղինակից ցույց տալ, թե Հայ մանրանկարչության մեջ անվանաթերթի ձևավորման որ փուլում են Սկեռայի Ավետարանի անվանաթերթերը: Ձեռք էլքը «արտակարգ» է համարում Սկեռայի Ավետարանի 27 լուսանցանկարները: Ինչպես Վենետիկի 1293 թ. հմր.1635 Ավետարանում, այնպես էլ այստեղ նման պատկերները սկիզբ են դնում ճոխ և վիրտուոզ այն լուսանցապատկերներին, որոնց բազմազանությունը և կենդանությունը ապշեցուցիչ է Թորոս Ռոսլինի և Արքունական դպրոցի ձեռագրերում: Դրանց հակիրճ սյուժետային բնույթը պրիմիտիվ տեսքով արդեն կար 989 թ. էջ-

միածնի Ավետարանի ստորին և կողմնային լուսանցանկարում:

Անշուշտ, Հագուստների ծալագարդման, տերևների գունավորման և զարդարվածի զարդացումը չի դնում բյուզանդական ճանապարհով. այն փոքր-ինչ նման է Արևմտադարձի անցած ուղուն, բայց գունավորման նուրբ, էլեգանտ եղանակով ավելի հարազատ է բյուզանդական արվեստին: Ձեռք էլքը ենթադրում է, որ Սկեռայի Ավետարանի զարդերը և ոճը պատկանում են Կոստանդնուպոլսի «ձեռագործարանին» (էջ 71), սակայն չի նշում, որ XI-XII դդ. Մեծ Հայքում կար արդեն բյուզանդամետ մանրանկարչական ուղղություն, որ XI դարի Կարսի Ավետարանի նման ձեռագրերը իրենց լուսանցազարդերով, իսկ XII դարի մի շարք ձեռագրեր իրենց զարդարվածությամբ կարող էին սնել հենց Սկեռայի Ավետարանը: Հստ էություն գրիչ Գրիգոր Սկեռացին<sup>20</sup> հետևում է հատուկ կիրիկյան գրքարվեստի, որի հիմնադիրները մինչև նոր ձեռագրերի երևան գալը «Նարեկի» ծաղկող Գրիգոր Մլիճեցին էր և Սեբաստիայի ու Վենետիկի հիշյալ ավետարանների ծաղկողները:

«Մոտիվների թափառումը-մոտիվների այլափոխումը» ենթագլխում հեղինակը վերստին հավաստում է Կոստանդնուպոլիսը որպես ակունք խորանների, ավետարանիչների, ֆիգուրատիվ էջերի և բուսական լուսանցազարդերի համար (էջ 76): Անշուշտ, նման մոտիվներ շատ կան XI-XII դդ. բյուզանդական ձեռագրերում, բայց դրանք ավելի շատ են X-XII դդ. հայկական ավետարանագրքերում, այդ թվում՝ մոտիվներ, որոնք Բյուզանդիայում չկան կամ հազվադեպ են. թռչնային խոյակները խորաններում, որ XI դ. տեսնում ենք Կարսի Ավետարանում<sup>21</sup>, թռչուններ, որսի մոտիվներ (արծվի մագիլներում նապաստակ կամ դառ), որ ցրված են X-XII դդ. ճարտարապետական զարդաքանդակներում և այլն: Կենդանիների կոնվը, ինչպես ճիշտ նկատում է

18 Տե՛ս S. D. Der Nersessian. Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century Vol. I. Washington 1993.

19 Տե՛ս Վ. Ղ ա գ ա ռ յ ա ն. Սյուժետային մանրանկարը Կիրիկիայում. Երևան, 1984 («Ավետարանիչներ» դուլիսը):

20 Ձեռք էլքը գրչին կոչում է Գրիգոր Մլիճեցի, իսկ մենք՝ Սկեռացի՝ տարբերելու համար «Նարեկի» գրիչ Գրիգոր Մլիճեցուց:

21 Լ. Ա գ ա ռ յ ա ն. Կիրիկյան մանրանկարչությունը 13-14-րդ դդ., Երևան 1964, էջ 67:

Հետազոտողը, գալիս է ոսկերչությունից, փղոսկրից, մետաքսից (կավեղացնեինք նաև՝ խճանկարից, դրվագումից, փայտարվեստից, քարարվեստից): Բայց կարելի է վստահ լինել, թե գլխազարդերում արծվի հարձակումը որսի վրա և այլ տիպի նկարներ սիմվոլիկ իմաստ չունեն (չՂ 77): Արծվի սիմվոլիկ իմաստները հայտնի են եղել Դիոնիսիոս Արեոպագոսի «Կորպուսի» հայերեն թարգմանությունից (711-714 թթ.) առաջ (արծվի սրատեսությունը, արքայական լինելը, զորացուցիչ կերակուրների սերը և այլն)<sup>22</sup>, իմաստներ, որոնք ցույց են տալիս Հրեշտակային (նրանց նմանողութամբ՝ սրբերի) արժանիքները, այդ թվում հոգիների որսը Ավետարանի միջոցով:

Հետևելով Ս.Տեր-Ներսեսյանին՝ պրոֆ. Ֆոն Էվր «Նարեկի» գրիչ և ծաղկող Գրիգոր Մլիհնցուն չի նույնացնում Սկեռայի Ավետարանի գրիչ և ծաղկող Գրիգորի հետ: Միանգամայն ճիշտ է, որ XII դ. վերջին տասնամյակներում Բալթիմորի Հմր. 538, Վենետիկի Հմր. 1635 և Սկեռայի ավետարաններում ձևավորվում է կիրիկյան ավետարանների կազմության հիմնական տիպը: Այդ ավետարանները միմյանց հետ ավելի են կապված թե՛ գեղարվեստական, թե՛ կառուցվածքային առումով, քան որևէ բյուզանդական ձեռագրախմբի հետ:

Ցավալի է արձանագրել, որ հայ միջնադարյան արվեստի մասին օտարալեզու

աշխատություններում անտեսվում են հայերեն և ռուսերեն ուսումնասիրությունները: Խոսքը վերաբերում է ոչ միայն վերջին տասնամյակներին, այլև վերջին հարյուրամյակին (սկսած մեծավաստակ Գ. Հովսեփյանի երկերից): Դա խանգարում է հուշարձանը տեսնել հայ մանրանկարչության և գրքարվեստի պատմություն մեջ՝ իր բնական տեղում:

Եվ այնուամենայնիվ մեծ գործ է կատարել Ֆոն Էվր: Ձեռագիրը ներկայացված է արժանի մակարդակով, որպես հայ արվեստի, նաև միջնադարյան քրիստոնեական արվեստի XII դարի ցայտուն գործերից մեկը՝ սկսած մանրամասն նկարագրություններից, վերջացրած պատկերագրական ու գեղարվեստական հաճախ նուրբ վերլուծություններով ու դիտարկումներով:

\* \* \*

Գերմանացի Հետազոտողները հայագետների սեղանին են դրել մի արժեքավոր ուսումնասիրություն, որն ընդլայնում է մեր պատկերացումները հայկական ձեռագրական մշակույթի ճակատագրի վերաբերյալ:

Արվեստագիտության դոկտոր

Վ. Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

Պատմ. գիտ. դոկտոր

Ա. Ա. ԲՈՋՈՅԱՆ

22 "The Armenian Version of the Works Attributed to Dionisius the Areopagite", Ed. by R. W. Thomson, Louvain 1987, p. 51 (H.H.XV.8).